դուքան կը կազմեն։ Սոքա անդուրթ վաշխառուներ են, ժողովուրդի արիւնը վերջին աստիճան ծծած են, ժողովուրդը պարտքի տակ են և աղքատ, որով սկսած են իւրեանց կալուածները քրդաց վաճառել։

Ժողովուրդն երկրագործութեամբ կը պարապի, ունի խիստ բերրի հող։

Եկեղեցի մի ունէին, որ մեծ և սեաւ քարերով էր շինած, որոյ համար, ևս Գարա—Քիլիսէ ասուած է որ սեաւ եկեղեցի կը նշանակէ, պատերազմի միջոցին կրակի տրուած էր, այժմ նորը շինուած է գիւղի արևմտեան եզրը։ Եկեղեցին ունի 25 ի չափ կրպակներ, որոց հասոյթով հասարակ ուսումնարան մի բացուած է։ Մի փոքր գերեզմանատուն կայ տեղս կոշտ տապանաքարերով, միայն մի խաչքար կայ որոյ վերայ գրուած «ՌՃՀ· որ ի խաչս բարեխօս Մալխասին»։

Նոր վախճանած Աղաճան աղա, Խանամիրեանի (Բաղիշեցի վաճառական) գերեզմանի վերայ գրուած է մի օրօրոցաձև քար· որ ունէր մէկ մեթր բարձրութիւն 1 ½ մեթր երկայնք, այս քարը Գարա—Քիլիսէից 2 ½ ժամ արևելեան հիւսիս Փոխան գիւղի բարձրը գտնուած Բազկաբերդից բերել տրուած էր· այս քարի վրայ արձանագրութիւն չը կար, միայն երեք կողերուն վերայ մարդու մի պատկեր փորագրուած էր կէս մէջքից բարձր, մի երեսով։

Գիւղաքաղաքս դաշտիս մէջ խիստ գեղեցիկ դիրք ունի, սորա քաւշանը ընդարձակ է և ջրերու մէջ, որք տակաւ առ տակաւ ներքևն գիւղաքաղաքիս կը մօտենան, չորս կողմից կը պատեն։

Քօր գետին աջ եզրին վերայ շինուած է կառավարութեան պաշտօնատունը, ուստի կանցնի խճուղին,